ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

17.07.2018թ.

ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/85

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով քաղաքացի Ժիրայր Աղաբաբյանի կողմից 26.06.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **Քաղաքացի Ժիրայր Աղաբաբյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

Քաղաքացի Ժիրայր Աղաբաբյանը՝ (այսուհետ՝ նաև բողոքաբեր) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 26.06.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուն իր կարիքների համար ս.թ. մայիսի 2-ին հայտարարել է սննդի մատուցման ծառայության բաց մրցույթի ընթացակարգ: Ընթացակարգի հայտերի բացման օր է սահմանվել 13.06.2018թ.:

Հայտ է ներկայացրել «Դիետիկ Սնունդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N3 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Դիետիկ Սնունդ» ՍՊԸ-ն:

Պատվիրատուն նշել է, որ նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ է համարվում հիվանդների համար պատրաստվող և մատուցվող սննդի կազմկերպումը, որը պետք է համապատասխանի հրավերի պահանջներին (հավելված 1.1՝ ճաշացուցակ):

Այդ իսկ պատճառով գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պետք է մերժվեր «Դիետիկ Սնունդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը, քանի որ իր կողմից ներկայացրած պայմանագիրը չի համապատասխանում «ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/6» ծածկագրով մրցույթի պահանջներին և չի համարվում նմանատիպ:

Գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, ըստ որի հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ չեղյալ համարել Հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ «Դիետիկ Սնունդ» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումը»:

Բողոքաբերը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին ժամանակացույցի մասին, սակայն չի ներկայացել նիստերին:

2. «<u>Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) քաղաքացի Ժիրայր Աղաբաբյանի կողմից 26.06.2018թ. ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 11.07.2018թ. թիվ գրությամբ հայտնել է հետևյալը.

««Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/6» ծածկագրով էլեկտրոնային մրցույթ:

Հայտնում եմ, որ «ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/6» ծածկագրով մրցույթը տեղի է ունեցել 16.06.2018թ., որին մասնակցել է միայն մեկ կազմակերպություն՝ «Դիետիկ Սնունդ» ՍՊԸ-ն, որն էլ սահմանված կարգով ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը և մրցույթի հանձնաժողովի կողմից ճանաչվել է հաղթող մասնակից: «Դիետիկ Սնունդ» ՍՊԸ-ն որպես

նմանատիպ ծառայությունների պայմանագիր ներկայացրել է «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ի, այսինքն, Պատվիրատուի հետ նախկինում կնքված պայմանագիրը, որի հիման վրա այդ կազմակերպությունը մատուցել է նույն ծառայությունները, որոնք հրավերով սահմանված էին պատվիրատուի կողմից: Ավելին, այդ կազմակերպության կողմից մատուցված ծառայությունները երբևէ դժգոհություն չեն առաջացրել, իսկ ծառայություն ստացող հիվանդները բազմիցս իրենց գոհունակությունն ու շնորհակալությունն են հայտնել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը սահմանում է, որ բողոքը ներկայացվում է՝ դրան կից ներկայացնելով իրավական և փաստական ապացույցներ, որոնք հիմնավորում են բողոքը: Նույն օրենքի 46-րդ 2-րդ մասը սահմանում է, որ բողոքի քննությունն իրականացվում է քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ: Այսինքն, բողոք ներկայացնող անձը կրում է իր ներկայացրած դիրքորոշման փաստական հանգամանքները հիմնավորելու պարտավորություն, մինչդեռ բողոքին կից որևէ ապացուցողական հիմք ներկայացված չէ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ խնդրում եմ քաղաքացի Ժիրայր Աղաբաբյանի կողմից ներկայացված բողոքը մերժել»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Միեր Սիմոնյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/85 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է քաղաքացի Ժիրայր Աղաբաբյանի կողմից 26.06.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 11.07.2018թ. գրությունը, «ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/6» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/6» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 13.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 և 20.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, «Դիետիկ Սնունդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը.

«Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ի կարիքների համար սննդի մատուցման ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԿՖԲԳՀԻ-

ԲՄԾՁԲ-18/6» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Դիետիկ Սնունդ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

Հրավերով սահմանվել է, որ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի գնման առարկա է հանդիսանում «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ սննդի մատուցման ծառայության ձեռքբերումը», որի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսվել են հետևյալ պայմանները (Հավելված 1).

«Սննդի մատուցում ծառայություն.

Նույն ընթացակարգով հաղթող ճանաչված մասնակցին առաջարկվում է կազմակերպել հիվանդների սննդի ծառայությունների մատուցում: Հիվանդների սնունդը պետք է պատրաստվի և մատուցվի ք. Երևան, Օրբելի 41 հասցեում գտնվող «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ ճաշարանում՝ օրական երեք անգամ՝ ըստ Հավելված 1.2 նշված կարգի և ժամերի: Օրական սպասարկվող հիվանդների միջին քանակը կազմում է 87 մարդ»:

Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի թիվ 1.2 հավելվածով սահմանվել են Մատուցվող սննդին վերաբերվող պահանջները, Ծառայությունների մատուցմանը վերաբերվող պահանջները, ինչպես նաև ծառայությանը վերաբերող տեխնիկական պահանջները: Մասնավորապես՝

1. Մատուցվող սննդին վերաբերվող պահանջներ.

Մատուցվող ուտեստները պետք է պատրաստված լինեն բացառապես թարմ մթերքներից:

• Տաք/սառը մսային ուտեստները պետք է պատրաստված լինեն թարմ տեղական (չներկրված) մսից:

• Ըմպելիքները պետք է պատրաստված լինեն բնական թարմ մթերքներից՝ առանց կոնսերվանտների:

2. Ծառայությունների մատուցմանը վերաբերվող պահանջներ.

• Սնունդը մատուցվում է սեղաններին տեղաբաշխված՝ ըստ յուրաքանչյուր սեղանի շուրջ նստած հիվանդներին թույլատրելի սննդակարգի, ըստ անհրաժեշտության կարող է տրամադրվել նաև հիվանդասենյակում՝ սննդի անհատական տրամադրման սկուտեղ-մատուցում սկզբունքով:

• Սեղանները պետք է հագեցած լինեն ճաշարանային անհրաժեշտ պարագաներով, սպասքով, համեմունքներով, սուսներով, անձեռոցիկներով:

2. Տեխնիկական պահանջներ.

• Մասնակիցը ըստ անհրաժեշտության պետք է ճաշարանում իրականացնի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքներ՝ չդադարեցնելով ծառայությունների մատուցման գործընթացը:

• Հաղթող մասնակցի կողմից ճաշարանում սննդի կազմակերպման աշխատանքներում ընդգրկված աշխատողները պետք է ունենան արտահագուստ:

• Ողջ անձնակազմը պետք է ունենա սանիտարական հետազոտման հավաստագրեր՝ ՀՀ-ում գործող նորմերին համապատասխան:

• Ճաշարանը պետք է աշխատի շաբաթական՝ 7 օր, 08:00-ից մինչև 21:00-ն:

• Ճաշարանի տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է՝ 120 մ2:

«Դիետիկ Սնունդ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի 3 հավելվածով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/6» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 13.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N2 արձանագրության՝

• 1.1 կետով արձանագրել է, որ «Դիետիկ Սնունդ» ՍՊԸ-ի գնային առաջարկը 1-ին չափաբաժնի մասով կազմել է 46,300,000 ՀՀ դրամ:

• 1.4 կետով Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Դիետիկ Սնունդ» ՍՊԸ-ին:

Որպես նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագիր, «Դիետիկ Սնունդ» ՍՊԸ-ն Հանձնաժողովին է ներկայացրել «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ի հետ 01.02.2018թ. կնքված «Սննդի կազմակերպման ծառայության մատուցման» N 1 պայմանագիրը (պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության միավորի գինը կազմում է 2.950 ՀՀ դրամ, առյալ հարկերը): Ներկայացվել են նաև հաշիվ-ապրանքագրեր: Պայմանագրի տեխնիկական բնութագիրը սահմանվել է հետևյալ բովանդակությամբ.

«Հիվանդների սնունդը պետք է պատրաստվի և մատուցվի ք. Երևան, Օրբելի 41 հասցեում գտնվող «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ի

ճաշարանում՝ օրական երեք անգամ՝ ըստ Հավելված 1.1 նշված կարգի և ժամերի: Օրական սպասարկվող հիվանդների միջին քանակը կազմում է 87 մարդ»:

Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունների մատուցման վերջնաժամկետ է նշվել՝ «մինչև նոր ընթացակարգով պայմանագրի կնքումը»:

20.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետով՝ հաշվի առնելով մասնակցի ներկայացրած որակավորման չափանիշները հիմանավորող փաստաթղթերը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշել է ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել և պայմանագիր կնքելու առաջարկ ներակայացնել «Դիետիկ Սնունդ» ՍՊԸ-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

-6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Նույն մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

-13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

- 34-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

• 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին

համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

• 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

- 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

-39-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրի գինը կարող է լինել գործոնային, երբ պայմանագրի գինը փոփոխվում է պայմանագրով նախատեսված պայմանների (գործոնների) փոփոխության ազդեցությամբ: Հակառակ դեպքում պայմանագրի գինը կայուն է, և կողմերը պարտավոր են պայմանագրային պարտավորությունները ողջ ծավալով կատարել պայմանագրի գնի շրջանակում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով:

- 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը

գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

- 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

«ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/6» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն հրավերով սահմանված առավելագույն գնի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի նույն հրավերով սահմանված առավելագույն գնի քսան տոկոսից:

բ. նույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի)

պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Նույն կետի համաձայն՝ նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ է համարվում հիվանդների համար պատրաստվող և մատուցվող սննդի կազմակերպումը, որը պետք է համապատասխանի հրավերի պահանջներին (հավելված 1.1 ճաշացուցակ):

Բողոքներ քննող անձն ուսումնասիրելով «Դիետիկ Սնունդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագիրը՝ արձանագրել է հետևյալը.

- «Դիետիկ Սնունդ» ՍՊԸ-ի և «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ի միջև 01.02.2018թ. կնքված «Սննդի կազմակերպման ծառայության մատուցման» N 1 պայմանագրի գինն արտահայտված չէ մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկված ընդհանուր գումարով, այլ նշված է, որ պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության միավորի գինը կազմում է 2.950 ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:

- Որպես պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունների մատուցման վերջնաժամկետ նշվել է՝ մինչև նոր ընթացակարգով պայմանագրի կնքումը:

- «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ի կողմից սննդի կազմակերպման ծառայության մատուցման նոր պայմանագիր չի կնքվել:

Այսպիսով, հաշվի առնելով, որ «Դիետիկ Սնունդ» ՍՊԸ-ի և «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ի միջև 01.02.2018թ. կնքված «Սննդի կազմակերպման ծառայության մատուցման» N 1 պայմանագիրը կնքված չէ պայմանագրի կատարման համար առաջարկված ընդհանուր արժեքով, ինչպես նաև այն, որ պայմանագրի գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունների մատուցման կոնկրետ վերջնաժամկետ նախատեսված չէ, այլ նշված է՝ «մինչև նոր ընթացակարգով պայմանագրի կնքումը», այսինքն, տվյալ պայմանագիրը դեռևս ավարտված չէ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ նշված պայմանագիրը չի կարող համարվել որպես նախկինում պատշաճ կատարված (ավարտված) նմանատիպ պայմանագիր:

Ելնելով վերոգրյալից Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ Հանձնաժողովը՝ «Դիետիկ Սնունդ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելով և վերջինիս ընտրված մասնակից ճանաչելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով, Կարգի 61-րդ և 63-րդ կետերով, ինչպես նաև Հրավերի 2.5 կետով սահմանված պահանջները:

Ամփոփելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ Բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Քաղաքացի Ժիրայր Աղաբաբյանի կողմից 26.06.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Դիետիկ Սնունդ» ՍՊԸ-ին՝ թիվ 3 արձանագրությամբ հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**